https://doi.org/10.46991/hc.2022.18.2.166

Peculiarities of the Concept of Time in Jean-Paul Sartre's " The Chips are Down"

Alvard Mayilyan
https://orcid.org/0000-0003-1276-1686
YSU Department of Foreign Literature, Applicant
alvardmayilyan@gmail.com

Keywords: existentialism, chronotope, space-time, memory, novel-screenplay, concept, paradise.

The article analyzes the changes and expressions of the classical definition of the chronotope in the novel-screenplay by Jean-Paul Sartre " The Chips are Down", as well as new manifestations of the space-time concept through the depiction of memories and the afterlife of the characters.

New manifestations of the chronotope are explored through the memories and imagination of the characters, as well as the technique of the double chronotope, the introduction of fantastic elements into the text as an interpretation of the author's philosophical views.

Ժամանակի հայեցակարգի առանձնահատկությունները Ժան-Պոլ Սարտրի «Վերջին հնարավորություն» վեպ-կինոսցենարում

Ալվարդ Մայիլյան
ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոն, հայցորդ

Հիմնաբառեր՝ էկզիստենցիալիզմ, քրոնոտոպ, տարածաժամանակային, հիշողություն, վեպ-կինոսցենար, հայեցակարգ, դրախտ։

Հոդվածում վերլուծվում են դասական քրոնոտոպի փոխակերպումը Ժան-Պոլ Սարտրի «Վերջին հնարավորություն» վեպ-կինոսցենարում, տարածաժամանակային հայեցակարգի նոր դրսևորումները հերոսների հիշողությունների ու հանդերձյալ կյանքի պատկերման միջոցով:

Ուսումնասիրվում են քրոնոտոպի նոր դրսևորումները հերոսների հիշողությունների, երևակայության ու համակերպման միջոցով, ինչպես նաև կրկնակի քրոնոտոպի հնարը, ֆանտաստիկ տարրերի ներմուծումը տեքստ՝ որպես հեղինակի փիլիսոփայական հայացքների մեկնություն:

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 166-174

Received: 12.10.2022
Revised: 15.12.2022
Accepted: 25.12.2022

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2022

Особенности концепции времени в романе Жана-Поля Сартра «Последний шанс»

Алвард Маилян
Кафедра иностранной литературы ЕГУ, заявительница

Ключевые слова: экзистенциализм, хронотоп, пространственно-временной, память, роман-киносценарий, концепт, рай.

В статье анализируются изменения и выражения классического определения хронотопа в романе-киносценарии Жана-Поля Сартра «Последний шанс», а также новые проявления пространственно-временной концепции через изображение воспоминаний и загробной жизни персонажей.

Исследуются новые проявления хронотопа через воспоминания и воображение персонажей, а также прием двойного хронотопа, введение в текст фантастических элементов как интерпретация философских воззрений автора.

* * *

Ներածություն: XX դարասկզբից բազմաթիվ գրականագետներ և գրաքննադատներ անդրադարձել են «քրոնոտոպ» եզրույթի սահմանմանն ու ուսումնասիրությանը: Լույս են տեսել հսկայական ծավալի աշխատություններ: Հոդվածի գիտական նորույթն այն է, որ Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործությունները թեև մինչ օրս բազմաթիվ վերլուծությունների են ենթարկվել, սակայն քրոնոտոպի դրսևորումներն այդ ստեղծագործություններում և հատկապես դասական քրոնոտոպի շեղումը ամենևին ուսումնասիրված չէ: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս մեծ կարևորություն է տրվում տեղի ու ժամանակի հայեցակարգի ուսումնասիրությանը, քրոնոտոպի նոր ձևերի բացահայտմանը:

Ոչ մի ստեղծագործություն գոյություն չունի տարածաժամանակային վակուումում. այն այս կամ այն կերպ միշտ պարունակում է ժամանակ ու տարածություն (Бахтин, 1986, 121): Կարևոր է հասկանալ, որ գեղարվեստական ժամանակն ու տարածությունը աբստրակցիաներ չեն, և ընթերցողը գործ ունի շատ կոնկրետ տարածաժամանակային կոորդինատների համակարգի հետ: Ֆրանսիացի էկզիստենցիալիստ գրող, փիլիսոփա և մտածող Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործություններն այս առումով բացառություն չեն: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժամանակի հայեցակարգի առանձնահատկությունները Սարտրի «Վերջին հնարավորություն» վեպ-կինոսցենարում:

Ժամանակակից գրականությունը շատ հետևողականորեն կիրառում է քրոնոտոպների հնարավորինս բարդ միախառնումը. այս բարդ միախառնումն ավելի բնորոշ է, իհարկե, պոստմոդեռնիստական գրականությանը, որի ներկայացուցիչներն ընդգծում են իրենց ստեղծած գեղարվեստական աշխարհի պայմանական լինելու փաստը. տեքստն ու աշխարհը համարժեք են և անտեսանելի: Գրական ստեղծագործությունն այլևս ստեղծագործական գործունեության վերջնական արդյունք չի համարվում, այլ հեղինակի ու տեքստի փոխազդեցության գործընթաց:

Ժան-Պոլ Սարտրը և ֆրանսիական էկզիստենցիալիզմը: Ժան-Պոլ Սարտրը (Jean-Paul Charles Aymard Sartre 1905-1980) ֆրանսիացի գրող, փիլիսոփա և հրապարակախոս է, որն իր ողջ կյանքի ընթացքում հանդես է եկել գաղութատիրության, ռասիզմի և անազատության դեմ,

արտահայտվել ի պաշտպանություն ճնշված ժողովուրդների, անցել է ֆրանսիական ուսանողության ձախ խռովարարության կողմը՝ այդ առիթով էլ 1974 թ. տպագրելով իր ‹‹Խռովությունը միշտ իրավացի է›› երկը: Երբ 1964 թ. ‹‹Բառեր›› ինքնակենսագրական վիպակի համար արժանացավ Նոբելյան մրցանակի, հրաժարվեց՝ ասելով, որ իրեն մրցանակ շնորհող կոմիտեն անտեսում է XX դարի հեղափոխական գրողների աշխատությունները: Միևնույն ժամանակ նա չէր ցանկանում կապված լինել որևէ սոցիալակ,ան կառույցի հետ՝ կասկածի տակ դնելով իր անկախությունը: Նույն պատճառով նա հրաժարվեց նաև «Պատվո լեգեոն» շքանշանից:

Լինելով ֆրանսիական աթեիստական էկզիստենցիալիզմի պարագլուխը՝ նա 1943 թ. դոկտորական ատենախոսություն գրեց՝ վերնագրված ‹‹Կեցությունը և ոչինչը››: Ունենալով բավականին հակասական փիլիսոփայական հայացքներ, միահյուսելով Ս. Կիերկեգորի, Է. Հուսեռլի և Զ. Ֆրոյդի գաղափարները՝ Սարտրը ձգտում էր միջին գիծ գտնել իդեալիզմի ու մատերիալիզմի միջև: Ելակետ ընդունելով ‹‹գոյությունը նախորդում է էությանը›› էկզիստենցիալիստական հիմնադրույթը՝ Սարտրն իր ‹‹Ֆենոմենի գոյաբանությունը›› կառուցում է կեցության երկու տեսակների՝ ‹‹ինքնին կեցության›› (օբյեկտիվ իրականության) և ‹‹իր համար կեցության›› (գիտակցության) արմատական հակադրության վրա: Կեցության ու գիտակցության խզումը Սարտրին հանգեցնում է դուալիզմի: Գիտակցությունը, լինելով իր հատուկ տեսակի կեցության պատճառը, ըստ Սարտրի՝ ‹‹կեցության չկեցությունն›› է , ճեղք է կեցության մեջ, սակայն միայն դա է կյանքի ակտիվության, շարժման ու որակական բազմազանության աղբյուրը, դա է միայն իմաստավորում ինքնընթացն ու անհեթեթ աշխարհը: Բարոյագիտության ոլորտում Սարտրը սուբյեկտիվիզմի ու անհատապաշտության դիրքերում է: Այստեղ հիմնականը ազատության կատեգորիան է, որը դիտարկվում է որպես մարդկային վարքի էություն, գործունեության աղբյուր և մարդու գոյության միակ հնարավորություն. ‹‹Մարդը միշտ և ամբողջովին ազատ է կամ նա բոլորովին գոյություն չունի›› (Սարտր, Մարդը դատապարտված է ազատ լինելու): Սարտրը ժխտում է նաև բարոյականության օբյեկտիվ սկզբունքներն ու չափանիշները. յուրաքանչյուր մարդ կարող է ընտրել իր սեփական բարոյականությունը: ‹‹Դիալեկտիկական բանականության քննադատություն›› երկում նա փորձում է վերլուծել հասարակական հարաբերությունները պատմական զարգացման ընթացքում, սակայն երկրորդական նշանակություն տալով օբյեկտիվ տնտեսական ու սոցիալական կառուցվածքներին և ելնելով մարդու անհատական գոյությունից՝ սոցիալ-պատմական վերլուծությունն ինքնըստինքյան փոխարինվում է մարդաբանականով:

Ոչ ավանդական քրոնոտոպ: Սարտրի ստեղծագործություններում առկա են զուգահեռ ժամանակներ ու տարածություններ: Որոշ ֆանտաստիկ պատումներում կամ մեմուարներում դրանք հատվում են. այստեղ օգնության են գալիս երևակայությունը կամ հիշողությունը: Միևնույն ժամանակ այս աշխարհները լիովին մեկուսացված չեն, նրանք ունեն հատման կետեր՝ երբեմն հիմնական, երբեմն մտացածին, ինչպես, օրինակ, ‹‹Վերջին հնարավորություն›› վեպ-կինոսցենարում:

Բավականին հետաքրքրական է ստեղծագործության հերոսների վերաբերմունքը մահվան հանգամանքին: Մահվան՝ որպես ժամանակի քրոնոտոպի ուսումնասիրությունը բավականին ոչ ավանդական է: Սովորաբար գոյության փիլիսոփայությունը դիտելով որպես աշխարհայացքային համակարգ՝ էքզիստենցիալիզմի թե՛ կրոնական, թե՛ աթեիստական ուղղության ներկայացուցիչներն այն չեն պատկերացնում առանց աղետի հոգեբանության,

մահվան պրոբլեմի քննարկման, ապագայի նկատմամբ անվստահության, գործազրկության, պատերազմի սարսափի, վաղվա օրվա անորոշության: Ահա այսպիսինն են այս փիլիսոփայության սոցիալական ու հոգեբանական արմատները, որոնք սարսափը դարձնում են մարդու «գոյաբանական» բնութագիրը:

Գոյությունը «կեցության» տարբեր վիճակներից առավելապես բացահայտվում է սարսափի մեջ: Էքզիստենցիալիստների սարսափն է գոյության հիմքում ընկած «նախապրումը»: Սարսափը չունի որոշակի ոչ մի հիմք, և մարդն այն ապրում է աղետի հոգեբանության, ճգնաժամի, անվստահության պարագայում: Սարսափն ի հայտ է գալիս արտաքին, անսովոր թշնամի ուժի հանդեպ, որը գոյությունը դնում է օտար, անբացատրելի իրավիճակի մեր՝ մղելով մարդուն առաջ՝ դեպի իր վերջը: Մարդիկ սարսափ են ապրում ոչնչի հանդեպ, և եթե ոչինչը մահն է, ուրեմն դա սարսափ է մահվան հանդեպ: Մարդը մշտապես փորձում է հեռանալ գլխավոր հարցից՝ մահվան անհեթեթության խնդրից, որովհետև չի կարող և չի ցանկանում պատասխանել այն հարցերին, թե որտեղից, որտեղ և ինչու է գնում:

Ըստ Վինձորի համալսարանի գիտաշխատող Ժոզեֆ Լեդիի, որը 1957 թվ. դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Ժան-Պոլ Սարտրի էքզիստենցիալիստական հումանիզմի ուսումնասիրության վերաբերյալ, Սարտրի աթեիզմը հենվում է այն փաստի վրա, որ գոյություն հանուն կեցությանը ուղղակի ինտուիտիվ է, բայց առանց ներուժի կամ որևէ նպատակի, հետևաբար չի վերաբերում իրենից դուրս ոչ մի բանի: Սա, ինչպես նշում է Լեդին, Սարտրի հիմնարար ընկալումն է, այսինքն աշխարհը, որտեղ մարդը հայտնվում է, պատահական է, հենց այնպես ստեղծված ու անիմաստ: Աշխարհակարգը սահմանվում է երկրի վրա մարդու կողմից, և այն այս կամ այն կերպ չի կառավարվում Աստծո կողմից: Ավելին՝ մարդն էլ իր հերթին նպատակ չունի խառնվել ուուրիշի գոյությանը, քանի այն այս կամ այն կերպ չի առնչվում իր ես-ի գոյին:

Բավականին հետաքրքիր է աթեիստ Սարտրի մոտեցումը «կյանք մահից հետո» կամ «կեցություն գոյից հետո» հասկացություններին: Մերժելով Աստծո գոյությունը՝ Սարտրը չի մերժում հանդերձյալ աշխարհի՝ դժոխքի կամ դրախտի գոյությունը: Իհարկե, ամենևին պարզ չէ՝ ինչպես են հերոսները հայտնվում այս կամ այն աշխարհում, և ով կամ ինչն է որոշում նրանց մեղքի աստիճանը, բայց փաստն անհերքելի է՝ աթեիստ Սարտրի հերոսներն ունեն «կյանք» կամ «գոյություն» կամ ուղղակի «վիճակ» մահից հետո: Նրանք դուրս չեն գալիս մահի հետ դեմ հանդիման, նրանք սահմանային վախի մեջ կամ այլ սահմանային վիճակում չեն հայտնվում: Այդ սահմանը նրանք արդեն անցել են. նրանք մեռած են: Այստեղ կարծես ճակատագրի հեգնանքով սահմանային իրավիճակում հերոսները հայտնվում են միայն սեփական հիշողության միջոցով:

Սեփական աթեիզմն անձամբ խոստովանելով՝ Սարտրը գրում է վեպ-կինոսցենար՝ հանդերձյալ կյանքի՝ «կյանք՝ մահից հետո» գաղափարի մասին: Հատկանշական է, որ կրոնական էքզիստենցիալիստներն անհատական գոյության և դրա ողբերգության հաղթահարման խնդիրները որոնում են Աստծո հետ միստիկական կապի, հաղորդակցման մեջ: Իսկ աթեիստ էքզիստենցիալիստները կարծում են, որ նույնիսկ Աստծո գոյությունը ոչինչ չի փոխում. «Մենք ոչ թե հավատում ենք, որ Աստված գոյություն ունի, այլ մտածում ենք, որ խնդիրը նրա գոյության մեջ չէ, պետք է, որ մարդը վերգտնի ինքն իրեն և համոզվի, որ ոչինչ չի կարող իրեն փրկել իրենից, դառնալ Աստծո գոյության արժեքավոր ապացույցը» (Левченко, 2005, 145): Այս իմաստով էքզիստենցիալիզմը լավատեսություն է, գործողության ուսմունք:

«Վերջին հնարավորություն» ստեղծագործության առանձնահատկությունները. տարբեր ժամանակային քրոնոտոպներ: «Վերջին հնարավորություն» ստեղծագործությունը գրվել է

որպես կինոսցենար, ինչի հիման վրա էլ 1947 թ. Ժան Դելլանուան նկարահանել է համանուն ֆիլմը: Սակայն «Վերջին հնարավորությունը» սոսկ կինոսցենար չէ. այն Սարտրի՝ էկզիստենցիալիստական մոտեցումների, մարդու ազատության ու անազատության, պայքարի և համակերպման խնդիրների գեղարվեստական ուսումնասիրությունն է: Թեև տեքստը՝ կինոսցենարի սկզբունքներին համապատասխան, բաղկացած է սոսկ գործողությունների ու երկխոսությունների պատկերումից, այնուամենայնիվ էքզիստենցիալիստական գաղափարները, անձի հոգեբանության վերլուծությունները, գոյության և կեցության հարցերը հստակորեն տարորոշվում են տողատակերում և հատկապես ստեղծագործության ավարտին (Սարտր, «Վերջին հնարավորություն»):

Հետաքրքիր են ստեղծագործության անվանումն ու նրա թարգմանությունը՝ ,,Alies, les jeux sont faits´´ `(ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է՝ «խաղադրույքներն արված են»), խաղասրահում հնչում են խաղավարի կողմից, երբ բոլոր խաղադրույքները կատարված են, և այլևս խաղադրույքներ չկան: Վեպ-կինոսցենարի վերնագրի ռուսերեն թարգմանությունն է՝ «վերջին հնարավորություն» (Последний шанс): Գրականագետ-թարգմանիչ Ա. Կոլոտովն էքզիստենցիալիստական տեսանկյունից է մոտեցել վերնագրի թարգմանությանը՝ վերջին հնարավորություն, այսինքն՝ հերոսներին վերջին հնարավորություն է տրվում հասկանալու, որ հնարավորություն այլևս չկա: Կյանքում, և առավել ևս մահից հետո նոր խաղադրույքի հնարավորություն չկա, կյանքն աբսուրդ է, մահը՝ առավել ևս:

Կինովեպում ժամանակն առանցքային դեր է խաղում թե՛ հերոսների, թե՛ ընթերցողի և թե՛ հեղինակի համար: Անգամ վերնագրում է ժամանակն առանցքային դեր խաղում. խաղադրույքներն արված են, այլևս ժամանակ չկա: Ինչպես արդեն նշեցինք, երկում իրար զուգահեռ ներկայացված են երկու ժամանակ՝ իրականը դրախտում և հետահայացը երկրի վրա: Ուշագրավ է, որ այստեղ տեղափոխումն անցյալ հիշողության միջոցով չի կատարվում, այլ ինչ-որ վերին ուժի թույլտվությամբ: Հերոսները յուրօրինակ ժամանակի մեքենա են դառնում և ընթերցողի հետ միասին տեղափոխվում ողջերի աշխարհ՝ անցյալ: Կարևոր է այն փաստը, որ անցյալի փաստը փոփոխության է ենթարկում ներկան, իսկ երկրորդ անգամ անցյալում հայտնվելը այլ կերպ է ձևափոխում ներկան. այն բոլոր ափսոսանքները, հույզերը, ապրումները, դրական ազդակները, հիշողությունները, որոնք ունեին սիրահարները, միանգամից հօդս են ցնդում երկրորդ անգամ դրախտում հայտնվելիս: Այսինքն՝ հերոսներն իրականում հայտնվում են նույն ժամանակային քրոնոտոպում, բայց արդեն ամբողջովին փոխված և հնարավորության աբսուրդը գիտակցած:

Տարբեր ժամանակային քրոնոտոպներ: Անդրադառնալով Սարտրի տեքստին՝ մենք տեսնում ենք, որ ժամանակի քրոնոտոպը կիսատ է մնում, քանի որ մարդկանց գիտակցությունը հանդերձյալ աշխարհում հանգում է անիմաստության. այստեղ չկա երևակայություն, չկա սպասում, այսինքն՝ չկա ապագա, կա միայն անցյալի հիշողությունը:

Վեպում շատ հետաքրքիր ձևով միահյուսվում են տարբեր ժամանակային քրոնոտոպներ՝ քրոնոտոպ 1 (երկիր) – քրոնոտոպ 2 (հանդերձյալ աշխարհ) – քրոնոտոպ 1 (երկիր 2-րդ անգամ) – քրոնոտոպ 2 (հանդերձյալ աշխարհ 2-րդ անգամ):

Երկրորդ անգամ հայտնվելով իրական մարդկանց մեջ՝ մենք տեսնում ենք մեր հերոսներին լրիվ նույն քրոնոտոպում, նույն ժամանակում ու տեղում, որտեղ նրանք գտնվում էին, երբ դեռ մահացած չէին: Սակայն մի կարևոր փաստ. նրանք այլևս նույնը չեն. հայտնվելով երկրորդ

քրոնոտոպում՝ հանդերձյալ աշխարհում՝ նրանք բացահայտում են իրականությունը և երբ նորից ետ են գնում երկիր (քրոնոտոպ 1), մեծ ցանկություն և միայն մեկ հնարավորություն ունեն փոխելու այն: Զախողումից հետո միանգամից ետ են վերադառնում հանդերձյալ աշխարհ (քրոնոտոպ 2):

Էկզիստենցիալիստ Սարտրն օգտագործում է ֆանտաստիկ տարր՝ ամենևին նպատակ չունենալով գրել ֆանտաստիկ ստեղծագործություն. այստեղ ֆանտաստիկ տարրն օգտագործվում է սեփական փիլիսոփայական հայացքները բացատրելու համար: Այսպիսով՝ Սարտրը հեռանում է Բախտինի նկարագրած դասական քրոնոտոպից՝ գիշեր-ցերեկ, ձմեռ-ամառ, երեկ-այսօր-վաղը պայմանական ժամանակային մոդելներից:

«Վերջին հնարավորության» մեջ այն միտքը, որ մարդիկ կախված են արտաքին հանգամանքներից, բավական ակնառու է: Սարտրը ստեղծում է համաժամանակյա պատկեր՝ ներկայացնելով Պիեռի ու Եվայի մահը: Ոչ միայն դրվագները, այլև դարձվածները մի անընդմեջ, կապեր ու անցումներ չունեցող կտավի մեջ հյուսում են այն ամենը, ինչ կատարվում է միևնույն ժամանակ տարբեր մարդկանց հետ տարբեր վայրերում: Ինչ էլ որ մարդն անի, նրա մեջ միշտ կա այն մտավախությունը, որ նա ուշ թե շուտ պետք է մեռնի, բայց մարդն ինքն իրեն փորձում է համոզել, որ իր հերթին հասնելուն դեռ բավականին երկար ժամանակ կա, կամ էլ այն երբեք էլ չի հասնի: Համաժամանակյա մահվան ձևը Սարտրին հնարավորություն է տալիս իր էկզիստենցիալիստական միայնակ հերոսներից հասարակական մարմին հիշեցնող ինչ-որ կերպար ստեղծելու:

Երկրի վրա հայտնվելով երկրորդ անգամ՝ իր սենյակում Եվան հայտնվում է ժամանակի ճիրաններում և չի ցանկանում փախչել: Նա պետք է ապացուցի, որ սա է իր ժամանակը, նա այստեղ և այս ժամանակ պետք է լինի, նա պետք է Պիեռի հետ լինի, պետք է իրենց ապրելու ու սիրելու ժամանակի համար պայքարի: Պիեռն էլ իր հերթին է հայտնվում ժամանակի ճիրաններում և չի ցանկանում փախչել. սա է իր ժամանակը, նա այստեղ և այս ժամանակ պետք է լինի, նա պետք է ապացուցի իր ընկերներին, որ դավաճան չէ, միայն այդպես մաքուր խղճով ու անունով նա կարող է ապացուցել, որ հենց այդ ժամանակն է իրենց ապրելու ու սիրելու ժամանակը: Երկու սիրահարներն էլ կառչած են այդ պահից, ժամանակից. նրանց պետք չէ անցյալը կամ ապագան, նրանց այդ պահն է պետք: Բայց երկրի վրա ամեն ինչ այլ է, սա հանդերձյալ աշխարհը չէ, որտեղ ժամանակը կանգ է առած, սա երկիրն է. այստեղ ժամանակը թռչում է, և նրանք ընդամենը քսանչորս ժամ ունեն՝ պայքարելու իրենց ապրելու և սիրելու ժամանակի համար: Ժամանակը պատի ժամացույցի վրա անընդհատ հիշեցնում է անցողիկության մասին: Ժամանակի անցողիկության գիտակցությունը սերտորեն կապված է սիրահարների վերջին հեռախոսային խոսակցության հետ:

Հիշողության քրոնոտոպ: Վեպ-կինոսցենարում հսկայական դեր է խաղում հիշողության քրոնոտոպը: Հերոսների հիշողություններում դեռ երկու կարևոր գործոն կա. Եվան ուղղակի չի կարող դուրս գալ հիշողության քրոնոտոպից, որտեղ ամուսինը թունավորեց իրեն և ցանկանում էր ամուսնանալ նրա կրտսեր քրոջ հետ՝ ունեցվածքին տիրանալու համար: Եվան պատասխանատվության զգացում ունի քրոջ հանդեպ, նա մոր պես հոգ է տարել նրա մասին և այժմ չի կարող թույլ տալ, որ հրեշ ամուսինը կործանի նաև քրոջ կյանքը: Հիշողության քրոնոտոպը և պարտքի զգացումը Եվային անդադար ետ են քաշում, սակայն անելանելիության ու աբսուրդի զգացողությունն ավելի է մեծանում այն ժամանակ, երբ քույրը նրան չի հավատում: Ընտրելով կյանքը՝ նա մահանում է:

Նույնը մենք տեսնում ենք Պիեռի հիշողության քրոնոտոպում. նա չի կարողանում դուրս գալ հիշողության քրոնոտոպից, որովհետև ընկերներն իրեն դավաճան են համարում: Նա պետք է գնա, ապացուցի ընկերներին, որ դավաճան չէ և վերադառնա Եվայի մոտ, որպեսզի ապացուցի սիրելու ու ապրելու իր իրավունքը: Սակայն հիշողության քրոնոտոպը նրան նույնպես ետ է քաշում. ժամանակի անցողիկության գիտակցությունը գալիս է այն պահին, երբ հասկանում է, որ իրենց խումբը շրջափակված է. նա չի կարող ընկերներին մենակ թողնել, նա չի կարող դավաճան լինել: Չընտրելով կյանքը՝ նա մահանում է:

Ազատության անհրաժեշտություն: Վեպ-կինոսցենարում Սարտրն անդրադառնում է նաև ազատության գաղափարին. Սարտրի հերոսները ազատ չեն, ինչը հակասում է հեղինակի բացարձակ ազատության տեսությանը: Հետաքրքիր էվոլյուցիա ենք նկատում Սարտրի՝ մինչ այս երկը գրված բացարձակ ազատության տեսության և այս երկից հետո գրված ազատության՝ ոչ որպես կատարյալ ազատության միջև: Ֆրանսիացի էկզիստենցիալիստն այստեղ առաջին անգամ ազատության զգացողությունը սերտորեն կապում է անհրաժեշտության գաղափարին: Նա ընդունում է, որ մարդու ազատություն սոցիալական վիճակ է՝ դրանով իսկ հեռանալով իր բացարձակ ազատության գաղափարից: Այսպիսով՝ Սարտրն անդրադառնում է անհրաժեշտության խնդրին, սակայն սեփական պատկերացումներով և սեփական փիլիսոփայական մոտեցմամբ է մեկնաբանում անհրաժեշտությունը: Սարտրը պնդում է, որ անհրաժեշտությունը ազատության հակառակն է: Այն խանգարում է մարդու ազատ գործունեությանը, սահմանափակում է նրա նախաձեռնությունը և հնարավորություն չի տալիս դրսևորելու նրա հոգևոր ու ֆիզիկական կարողությունները: Եվ, այնուամենայնիվ, նա խոստովանում է, որ անհրաժեշտությունը կապված է ազատության հետ: Հենց հասարակությանն ինչ որ բան ապացուցելու անհրաժեշտությունն է հերոսներին կտրում երջանիկ դառնալու ազատ ընտրությունից (Кандалинцева, 2001, 24):

Եզրակացություն: Էկզիստենցիալիստ Սարտրն առաջին անգամ ստեղծագործություն է ներմուծում ֆանտաստիկ տարր՝ ամենևին նպատակ չունենալով գրել ֆանտաստիկ ստեղծագործություն: Գրական այդ հնարն այստեղ օգտագործվում է սեփական փիլիսոփայական հայացքները բացատրելու, հանդերձյալ աշխարհի իր՝ աթեիստական մեկնությունը տալու համար:

Այսպիսով՝ Սարտրը հեռանում է Բախտինի նկարագրած դասական քրոնոտոպից՝ գիշեր-ցերեկ, ձմեռ-ամառ, երեկ-այսօր-վաղը, տուն-պարտեզ-փողոց պայմանական տարածաժամանակային մոդելներից, և ստեղծում նոր քրոնոտոպ՝ ժամանակի ու տեղի հայեցակարգի կրկնակի դրսևորում: Այս կրկնակի քրոնոտոպում, հերոսները մահից հետո, բնության օրենքներին հակառակ, նորից վերադառնում են երկիր՝ ստանալով փրկվելու վերջին հնարավորություն, այնուհետև ձախողելով այն՝ նորից հայտնվում են հանդերձյալ աշխարհում՝ զրո քրոնոտոպում:

‹‹Վերջին հնարավորություն›› ստեղծագործության մեջ Սարտրը դիմում է բավականին բարդ ժամանակային խաղի. ժամանակը շատ արագ փոխակերպվում է հենց հերոսների մեջ: Ստեղծելով կրկնակի քրոնոտոպ՝ Սարտրն իր հերոսներին մի յուրահատուկ ժամանակի մեքենա է դարձնում ընթերցողի համար՝ վերջինիս տեղափոխելով անցյալի իրական կյանք, այնուհետև վերադարձնելով ներկա՝ հանդերձյալ աշխարհ, թեև վեպի գործողությունների ներկան հենց այդ անցյալն էր: Անցյալը թեև հիշողության միջոցով է կապված հերոսների ներկայի հետ, սակայն

նրանք ֆիզիկապես են տեղափոխվում անցյալ՝ իրական կյանք, իրական վայր, իրական ժամանակ: Իսկ ապագա տեղափոխվելու հնարավորություն նրանք այլևս չունեն, հանդերձյալ աշխարհը դառնում է, այսպես կոչված, զրո քրոնոտոպ:

Տարածությունն ու ժամանակը ձևի և բովանդակության միասնությունն են, այսինքն՝ որոշ հետազոտողներ, այդ թվում՝ Մ. Մ. Բախտինը, կարծում են, որ այս կատեգորիաները ուղղակիորեն կապված են և չեն կարող գոյություն ունենալ առանց միմյանց: Սակայն ամենևին չպնդելով հակառակը՝ պարզապես ընդգծենք, որ կան գրական ստեղծագործություններ, որոնցում ժամանակը պատշաճորեն չի փոխկապակցվում տարածության հետ, կամ երկու կատեգորիաներից մեկն ընդհանրապես բացակայում է: Այս հնարն ավելի շուտ բնորոշ է մոդեռնիստական կամ պոստպոդեռնիսկտական գրականության քնարական կամ դրամատիկական ստեղծագործություններին, սակայն, ինչպես արդեն նշեցինք, Ժան-Պոլ Սարտրը պոստմոդեռնիստներից ավելի վաղ է կիրառում այս հնարը, և նրա՝ մեր ուսումնասիրության առարկա ստեղծագործությունում նկատվում է դասական քրոնոտոպից շեղում:

Գրականության ցանկ

Бахтин М. (1986), Формы времени и хронотоп в романе. Очерки по исторической поэтике // Бахтин М.М. Литературно-критические статьи. М.: Худ. литер., 121 с.

Кандалинцева Л. Е., Проблема свободы и выбора во французском экзистенциализме (Ж. П. Сартр, А. Камю) Журнал: Философия и общество. Выпуск №2(23)/2001, https://www.socionauki.ru/journal/fio/archive/2001_2/.

Левченко Е. (2005), Художественное творчество как переживаемое бытие // Вопросы философии., 145 с.

Сартр Ж., Последний шанс https://libcat.ru/knigi/proza/397998-37-zhan-pol-sartr-stavok-bolshe-net-litres.html#text.

Хализев В., Теория литературы, https://royallib.com/book/halizev_valentin/teoriya_literaturi.html,

Sartre J., L'existencialisme est un humanisme, https://fr.wikipedia.org/wiki/L%27existentialisme_est_un_humanisme#:~:text=L'existentialisme%20est%20un%20humanisme%20est%20un%20ouvrage%20philosophique%20de,en%20octobre%201945%20%C3%A0%20Paris.

Sartre J., L'etre et le neant, https://fr.wikipedia.org/wiki/L%27%C3%8Atre_et_le_N%C3%A9ant.

Sartre J., L'existence precede l'essence, https://la-philosophie.com/sartre-existence-precede-essence.

Sartre J., L'homme est condamne a etre libre, https://apprendrelaphilosophie.com/sartre-lhomme-est-condamne-a-etre-libre/#:~:text=Sartre%20a%20une%20th%C3%A8se%20sur,peut%20pas%20ne%20pas%20choisir.

https://scholar.uwindsor.ca/cgi/viewcontent.cgi?article=7333&context=etd

References

Baxtin M. (1986), Fopmy vpjemjeni i xponotop v pomanje. Ochjepki po istopichjeskoj poetikje // Baxtin M.M. Litjepatupno-kpitichjeskije stat'i. M.: Xud. litjep., s. 121.

Kandalincjeva L. (2001), Ppobljema svobody i vybopa vo fpancuzskom ekzistjencializmje (ZH. P. Saptp, A. Kamju) ZHupnal: Filosofija i obsh'jestvo. Vypusk №2(23), https://www.socionauki.ru/journal/fio/archive/2001_2/.

Ljevchjenko Je. (2005), Xudozhjestvjennoje tvopchjestvo kak pjepjezhivajemoje bytije // Vopposy filosofii. c. 145.

Saptp Zh., Posljednij shans https://libcat.ru/knigi/proza/397998-37-zhan-pol-sartr-stavok-bolshe-net-litres.html#text.

Xalizjev V., Tjeopija litjepatupy, https://royallib.com/book/halizev_valentin/teoriya_literaturi.html,

Sartre J., L'existencialisme est un humanisme, https://fr.wikipedia.org/wiki/L%27existentialisme_est_un_humanisme#:~:text=L'existentialisme%20est%20un%20humanisme%20est%20un%20ouvrage%20philosophique%20de,en%20octobre%201945%20%C3%A0%20Paris.

Sartre J., L'etre et le neant, https://fr.wikipedia.org/wiki/L%27%C3%8Atre_et_le_N%C3%A9ant.

Sartre J., L'existence precede l'essence, https://la-philosophie.com/sartre-existence-precede-essence.

Sartre J., L'homme est condamne a etre libre, https://apprendrelaphilosophie.com/sartre-lhomme-est-condamne-a-etre-libre/#:~:text=Sartre%20a%20une%20th%C3%A8se%20sur,peut%20pas%20ne%20pas%20choisir.

https://scholar.uwindsor.ca/cgi/viewcontent.cgi?article=7333&context=etd